ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՐԱՆՈՑ-ՀՅՈՒՐԱՑՆԵՐԻ ԵՒ ԴՐԱՆՑ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

Թ-ԺԱ դարերում Հայաստանում ստեղծված բարենպաստ պայմանների արդ-յունքում զարգացում է ապրում տնտեսական ու մշակութային կյանքը: Երկրագործու-թյունից ու անասնապահությունից զատ առաջընթաց է նկատվում արհեստների ու առեւտրի բնագավառում, որոնք հիմնականում կենտրոնանում էին զարգացած կամ զարգացման փուլում գտնվող քաղաքներում:

Առեւտրի զարգացումը ստեղծում էր նկատելի առաջխաղացում ոչ միայն երկրի ներքին, այլեւ արտաքին շուկաներում, որի հետեւանքով կառուցվում էին Հայաստանը հարեւան երկրների հետ կապող ճանապարհներ: Զարգացող քաղաքների ճանա-պարհների ուղղությամբ ծավալվում է իջեւանատների կամ քարավանատների շինարարությունը: Դրանք կոչվում էին հյուրանոցներ կամ հյուրատներ, պանդոկներ (փնդուկներ) կամ խանապարներ:

Հ. Մանանդյանը, խոսելով Հայրեվանքի մոտ գտնվող «Ազատ քաղաքի» տեղագրության շուրջ, մեջբերում է նկարագրություններ՝ քաղված Շահիսթունյանցից, Ալիշանից, Սմբատյանցից, որոնցում մատնանշվում են հյուրատների կամ քարավանատների ավերակներ[1]:

Միջնադարյան Հայաստանի հյուրանոց-հյուրատների կառուցմանն ու զարգաց-մանն անդրադարձել են Հ. Մանանդյանը[2], Վ. Հարությունյանը[3], Ս. Բարխուդարյանը[4], Բ. Առաքելյանը[5] եւ ուրիշներ: Սույն հոդվածում փորձենք կատարել որոշակի դիտար-կումներ հատկապես վանքերում կառուցված հյուրանոց-հյուրատների եւ դրանց վիմական արձանագրությունների շուրջ:

Այն, որ հյուրանոցները կառուցվել են նաեւ վանքերում եւ դրանց մերձակայքում, արդյունքն է այն բանի, որ վանքերում «սպասարկում էին ինչպես ուխտավորներին, այնպես էլ վանքերի մոտով անցնող քարավաններին»[6]: Պատահական չէ, որ հյուրա-նոցները հիմնականում կառուցվում էին այն վանքերի բակերում կամ մերձակա տարածքում, որոնք ապահովված էին ջրով, ունեին աղբյուրի առանձին շինություն, ջրամբար-ավազաններ, քանզի հյուրանոցներում երբեմն հյուրընկալվում էին բազմա-թիվ ուխտավորներ, առեւտրականներ, որոնց վանքը պետք է ապահովեր գիշերելու, սնվելու եւ շատ ուրիշ միջոցներով[7]:

---

1 Տե՛ս **Հակոբ Մանանդյան,** Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները (ըստ Պեւտինգերյան քարտեզի), Եր., 1936, էջ 184-185:

2 Տե՛ս անդ:

3 Տե՛ս **Վ. Հարությունյան,** Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Եր., 1960:

4 Տե՛ս **Ս. Բարխուդարյան,** Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Եր., 1935:

5 Տե՛ս **Բ. Առաքելյան,** Քաղաքները եւ արհեստները 9-13-րդ դարերում, հ. 2, Եր., 1964:

6 Տե՛ս **Վ. Մ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 12:

7 Նման դեպքերում ուխտավորները փոխհատուցում էին վանքերին «դարպաս», «աջահամբույր», «մասանց»

Հյուրանոցները կառուցվում էին ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ ֆեոդալների միջոցներով, ուստի վերջիններս պարտավորվում էին հոգալ դրանց տնտեսական ապահովությունը, որի համար առանձնացվում էին բազմաթիվ կալվածներ[8]:

Փաստորեն, հյուրանոցներն ինքնին տվյալ վանքի հասութաբեր հաստատություններից էին, որոնք շատ հաճախ վերածվում էին առեւտրական կայանատեղիների[9]: Ըստ Վ. Հարությունյանի, առեւտրական գործարքները տեղի էին ունենում հիմնականում բակավոր[10] քարավանատներում, քանզի վերջիններս սպասարկման իրենց դերը զուգակցում էին տոնավաճառի կամ շուկայի դերի հետ, ուր կատարվում էին գործարքներ երկրի տարբեր նահանգներից եւ հարեւան երկրներից եկած վաճառականների միջեւ[11]:

Հյուրանոց-հյուրատների շարքում առանձնապես հետաքրքրական է Սելիմի հյուրատունը, որը գտնվում է համանուն լեռնանցքի՝ դեպի Վայոց ձոր նայող հարթության վրա: Հյուրատան համալիրը բաղկացած է երեք մասից՝ եռանավ մեծ դահլիճից, արեւելյան կողմից կցված նախասրահից (նկ.1) ու սրա կողքին գտնվող կիսով չափ պահպանված թաղածածկ մատուռից: Բոլոր շենքերը կառուցված են սրբատաշ քարերով, որոնցից առաջին դահլիճի արեւելյան կիսակամար պատին՝ ներքուստ փորագրված է արձանագրություն. «...ես Չեսար, որդի իշխան/աց իշխանին Լիպարտի... եւ կենակից իմ Խորիշահ, դուստր իշխանին Վարդան[ն]/ա... շինեցաք զհոգետունս ի փրկութի. հոգոց մեր եւ ծնող/աց եւ եղբարց մեր ի ՔՍ ննջեցելոց...»[12]:

տալու միջոցով: Տե՛ս **Գ.Ռ. Գրիգորյան,** Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Եր., 1973, էջ 121:

8 Տե՛ս **Գ.Ռ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 120-121:

9 Տե՛ս անդ, էջ 122:

10 Ըստ ճարտարապետական հորինվածքի միջնադարյան Հայաստանի հյուրանոց-հյուրատները բաժանվում են երեք խմբի՝ միադահլիճ-միանավ, միադահլիճ-եռանավ, բազմադահլիճ-բակավոր: Տե՛ս **Վ. Հարությունյան,** նշվ. աշխ.:

11 Տե՛ս **Վ. Մ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 13:

12 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Եր., 1967, էջ 177-178, արձ. 545: Տե՛ս նաեւ **Ջալալեանց**, էջ 164, **Քաջբերունի**, «Փորձ», 1879, թ. 9, 115. **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 164-165:

Հայտնի է, որ Հայաստանում կան բազմաթիվ օպարալեզու (արաբերեն, վրացերեն, պարսկերեն) արձանագրություններ: Դրանցից շատերը գտնվում են հյուրատներ-ի որմերին՝ պայմանավորված նրանով, որ վերջիններս նախ եւ առաջ կապված էին առեւտրի հետ, ուր մուտք էին գործում բազմաթիվ ազգերի պատկանող անհատներ[13]: Արաբատառ պարսկերենով արձանագրություն ունենք Սելիմի քարավանատան նա-խասրահի մուտքի կիսաշրջանաձեւ բարավորին: Վերջինիս հայերեն տարբերակը բե-ռում ենք օգտվելով Ս. Բարխուդարյանի նշյալ աշխատության օրինակից.

ՊՈՒՍԱԻՏ ՀԱՆՏԻՐ ԽԱՆ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՏԻԵԶԵՐԱԿԱԼ Տ ՐՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՈՐԴԻՈՅ ՄԱՐԴԿԱՆ, ԻՇԽԵՅՈՂԻՆ ԱՐԱԲԱՅԻՈՅ ԵՒ ՊԱՐՍԻՑ ԵՒ ՆՎԱՃՈՂԻ ԱԶԳԱՅ ԵՒ ԱԶԱՆՑ, ԶՈՐ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՊԱՀԵՍՑ Տ[ԼՐ ՅԻՇԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐԻՆ, ԵՒ ՅԱՒԵՐԺԱՍՑԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ ՄԵԾԱԳՈՐԾ ԲԱՐԵՐԱՐՆ ՉԵՍԱՐ ՈՐԴԻ ԵՆԱՐԻՏԻ (ԼԻՊԱՐՏԻ) ՈՐԴԻՈՅ ԻՒԱՆԻ (ԵՒ ԿԻՆ ՆՈՐԱ) ՏՈՒՐՇԱՆ (ԽՈՐԻՇԱՆ) ԴՈՒՍՏՐ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ԹԻՒՓԻ (ԴԱՒՓԻ): ՏՈՒԵԱԼ (ԿԱՄ/ ՇԻՆԵԱԼ) Ի ԹՈՒԻՆ Հ ՃԻՐ Ի (727)[14]:

Նկատենք, որ հիճիրը (հիջրա) մահմեդական թվականն է, որը հաշվվում է Մու-համմեդից սկսած եւ հետ մեր թվականությունից մոտ 622, 623 տարի[15]:

Հյուրանոցների կառուցման, դրանց նվիրատվության վերաբերյալ բազմաթիվ վկայություններ կան հայկական վիմագրերում, որոնց մեծ մասը փորագրված են վան-քերում կառուցված հյուրատների որմերի, ինչպես նաեւ խաչքարերի վրա: Վերջինիս առումով բավականին ուշագրավ է Սեւանի «Քյոռ-Օղլու թավլա» տեղամասի քարա-վանատան 1957թ. պեղումների ժամանակ Ս. Բարխուդարյանի հայտնաբերած խաչքարը (նկ.2), որի արձանագրությունը վերաբերում է տվյալ քարավանատան կառուցմանը (վերծանել է Ս. Բարխուդարյանը), ուր ասվում է. «... մանդա-տուրտուխուց/իսին որդոյ Հասանայ Կայեն/եցո շինեցի գեոգետունս ի/ մէջ լերանց ի ոտս փուսա հասպատ հայրենից մեր Կայենի...»[16]:

Հյուրատուն կառուցելուն է վերաբերում նաեւ Մակարավանքի Ս. Աստվածածին եկեղեցուց դեպի հյուսիս գտնվող կիսավեր մատուռի խաչքարի պատվանդանի

13 Տե՛ս **Ս. Բարխուդարյան,** նշվ. աշխ., էջ 89-90:

14 Անդ, էջ 90:

15 Անդ, էջ 90: Հիջրայի թվականի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս **Ա. Աբրահամյան,** Հայոց գիր եւ գրչություն, Եր., 1973, էջ 134:

16 **Վ. Հարությունյան,** նշվ. աշխ. էջ 45-46: Տե՛ս նաեւ Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1957, թ. 8:

արձանագրությունը. «կանգնեց/աւ խաչս կ/ամաւ հաւր Յո/հանիսի եւ շի/նեցաւ հիւ-ր/ատունս ար/դեամբք Յո/հանիսի…»[17]: Վանքապատկան հյուրատունը գտնվելիս է ե-ղել գլխավոր եկեղեցուց հարավ, որի սենյակների պատերը կիսով չափ դեռ կանգուն են, որոնցից արեւելյանի վրա պահպանվել է բուխարիկի խորշը: Բուխարիներ եղել են ոչ միայն հյուրանոց-հյուրատներում, այլեւ վանքերի նշխարատներում[18]: Հենց Մակա-բավանքի հուշարձանախմբում կա նաեւ նշխարատուն, որի արեւելյան պատի հյուսի-սային մասում առկա է բուխարիկի խորշ:

Կառուցվող հյուրատները՝ լինելով եկամտի խոշոր աղբյուրներ, ստանում էին բազմաթիվ կալվածներ բարձրաստիճան անձանց, իշխանների նաեւ հոգեւորական-ների կողմից:

Ամաղուի Նորավանքի պարսպից դուրս, վանքի տնտեսական շինությունների ավերակների կենտրոնում, կանգուն է մի մատռանման շենք, որի ներսում՝ հարավա-յին պատին կից կանգնեցված է մի մեծ եւ պարզ խաչքար, որի ընդարձակ արձանա-գրությունը պարզում է շենքի՝ հյուրատուն լինելը, որը կառուցվել է 1273-1290 թթ.: Ըստ արձանագրության Սարգիս եպիսկոպոսը շինելով հյուրատունը տվել է. «…գեղ Զաւէշ իւր ամէն սահմանաւքն եւ զերկու ակնի ջաղացն յԱռվա, եւ այգի զԱխթամարենց բաժինն ի վանքս զԹ-ոմային, զՌվանիսին եւ զՊետրոսին…»[19]:

Ըստ Գոշավանքի Ս. Աստվածածին եկեղեցու ներսի, բեմի կիսակլոր պատի արձանագրության՝ Իգնատը եւ Դասապետ վարդապետը նորոգել են. «…զեկեղեցոյն եւ եդաք / զպատուարս, տնկեցաք այգի եւ յեկեղեցոյն ժամանոց դրաք եւ զ :Ա: (1) մասն հոյր/ատանն տվաք…»[20]: Ըստ երեւույթին, խոսքը վերաբերում է տնկած այգուց ստացված բերքին, որի մի մասը հատկացվում է վանքի հյուրատանը:

Հյուրանոցին տրվող նվիրատվության մասին է խոսվում նաեւ Սյունյաց Վաղադ-նի վանքի (Որոտնավանք) Ս. Կարապետ եկեղեցու հյուսիսային պատի արձանագրության մեջ, ուր Ջալալ արքեպիսկոպոսի որդի տեր Ստեփանոս Օրբելյանը գալով վանք տեսնում է հայր Սարգսի կառուցած հյուրանոցը եւ տալիս. «…զՎաղադին զիսջահորին զգոմեր եւ զԿիւրդի վանս ազատ ի մեր յամէն հարկէ զի յառաջ տված էր ժողովուրդ եւ մեք զմեր բաժին հա/սն տվաք ի պէտս պանդոկին…»[21]:

Գարեգին Հովսեփյանն իր «Ցիշատակարանք ձեռագրաց» աշխատության մեջ անդրադառնալով վանքերին տրվող նվիրատվությունների ձեռագրերին, ներկայաց-նում է «քրիստոսազգեաց ճգնաւորն Թ-աթուլ»-ի պատմությունը՝ կապված Սուրբ տե-սիլի եւ վերջինիս տեղում Սուրբ Գրիգորի անունը կրող եկեղեցու կառուցման հետ, ուր որոշ

17 «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, կազմեցին Ս. Ավագյան եւ Հռ. Ջանփոլադյան, Եր., 1977, էջ 196, արձ. 333 ա:

18 Նշխարատունը եկեղեցու կողքին կառուցվող փոքր շինություն է, ժամատուն, որտեղ նշխարներ են գործել պատարագի եւ տնօրինելի համար: Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. երրորդ, Եր., 1944, էջ 473:

19 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան,** Եր., 1967, էջ 246, արձ. 813: Տե՛ս նաեւ **Քաջերունի,** Արարատ, 1889, էջ 657. **Ալիշան,** Սիսական, էջ 203. **Լալայան,** XXVI, էջ 56:

20 «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, էջ 69, արձ. 139: Տե՛ս նաեւ **Ջալալեանց**, հ. Ա, էջ 140:

21 «Դիվան հայ վիմագրության», պրակ II, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան,** Եր., 1960, էջ 101, արձ. 289: Տե՛ս նաեւ **Ալիշան,** Սիսական, էջ 525-526. **Լալայան,** հ. Գ, էջ 151-152:

ժամանակ անց. «…Աշոտ Բագրատունի գայ ի վանքս, տաւնախմբէ զյիշատակ սրբոյն եւ զեիւրանոցն շինել հրամայէ եւ անուանէ զնա Այգի եւ հաստատուն գրով տայ ի վանքս, եւ որ զգէցիկ եկին ի վանքս եւ ուխտեցին ամ յամէ տալ յԱյգին յիսուն վեցկի եւ հարիւր այր եւ քաղաքագեաւղն Կաղազուան ուխտեցին հարիւր վեցկի երկերիւր այր անիսափան»[22]: Նշենք, որ վեցկին (վեսկի) վեց լուծ եզներով վարող գութանի տեսակ էր[23], որը փոխառվելով մի շարք ազգագրական շրջաններում (Այրարատ, Սյունիք, Վասպուրական, Բարձր Հայք եւ այլն), ապրել է յուրօրինակ զարգացում, որից գրեթե միանման գութաններ են առաջացել[24]: Վերջիններս եղել են խամ ու խոպան հողերը հերկելու հուսալի գործիքներ մինչեւ երկաթե գութանի լիակատար տարածումը, որին նվիրված են ժողովրդական ու գուսանական բազմաթիվ փառաբանող երգեր[25]:

Այսպիսով, սույն համառոտ բնութագրումից կարելի է եզրակացնել, որ ըստ զարգացած միջնադարում ծնունդ առած հյուրանոց-հյուրատների որմերի ու խաչքարերի վիմագրերի բովանդակության, լուսաբանվում է վերջիններիս կարեւոր դերն ու նշանակությունը երկրի առեւտրային, ընկերային-տնտեսական եւ, առհասարակ, պետության աշխարհիկ եւ հոգեւոր կյանքում:

22 Գարեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 6-7:

23 Տե՛ս **Սպ. Մալխասեանց,** Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ, Եր., 1945, էջ 336:

24 Տե՛ս **Վ. Բդոյան**, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 149:

25 Տե՛ս անդ, էջ 158: